

րանի կառավարիչքը, բայց նոցա գործունէութիւնը եղել է եւ լինում է միմեանց անվայել տիտղոսներով փառազարդել, միմեանց վարկը գետնովը զարկել եւ սորանով անպատճել ուսումնարանի անունը:

Ահա յայտնի ապացոյցները, որ հոգեւորական դասը այլ նպատակի չէ ծառայում. հին սերունդը նորին չէ դիմագարձում. որովհետեւ հոգեւորական դասը իւր ինամոց յանձնուածդպրոցի կառավարութիւնը յանձնում է ժողովրդին եւ ուսումնական եւ բարերարոյ անձանց:

Թող չքաժանեն մեր պարոններ զհայրու զորդին առանձին կուսակցութիւնների, թող երիտասարդներն կղերական ճնշող ոգի եւ խարդախ կուսակցութիւն չերազեն. որովհետեւ նգնատիս

Նոյուայի որդիքը՝ այժմեան եղուխտները տարբեր են Հայ հոգեւորականի ուղղութիւնից. Հայ հոգեւորականը հակառակ կարծեաց՝ իմ եւ քո չէ բաժանում, հաւասար իրաւունքով ազգային գործերին մասնակցելու արտօնութիւնը վայելում է թերեւս ժողովրդից ինքըն ստանալով:

Թող կրքերը հեռանան, մի ազգին մի սիրոտ ովէտք է, հզօրը տկարին օգնէ թող եւ բոլորը միասին՝ խեղճ դիւղացուն, որի անմիտար զըսութիւնը թէ գիտութեան, թէ երկրագործութեան եւ թէ արհեստից մէջ կարեկցութեան արժանի է, եւ նորան թերակրթութեան ողորմելի դըսութիւնից ազատելու է:

ԵՆՈՎՔ ՍԱՐԿԱՏԱԴ ՄՈՎՍԵՍՆԱ.

## Ի ԲԱՆՏԵ ՆԻ ՃԵԲՈՒՐԻ.

Յերկնային պայծառ կամար լայնատարած կապուտակ,

Փայլին փայլուն աստեղունք շրջան առնուն բոլորակ:

Կարշաւէ սորա մէջէն ահազին գունան Ելեզի,

Լուսաւորել տիեզերն յերփներանգ գոյնս հաճելի:

Ըողայ նորա լուսերէն Կիշարուրի գետ վըսեր,

Օսր ծնանին ի կարկաչ հազար մանր առուակներ:

Ալոր մելոր կաշին դէպ ի հարաւ գնալով;

Երծաթափայլ լուսինէն շքեղութիւն առնելով:

Եյս գետն և առուներ մի դաշտի մէջ ընթանան,

Յողին իւրեանց ցնցուղներ՝ բոյսերըն զուարթանան:

Կղարդարին կանանչներ Կիշարուրի սիրուն դաշտ:

Հակառակիչ հողմերն կլինին այս տեղ միշտ հաշտ:

Քօղարկած է այս դաշտն գոյն գոյն ծաղկանց թուփիրով,

Ահրձուին աստ թռչուններ անուշ անուշ երգելով:

Երեսում էր հեռուէն թղպագոյն Խամուշան \* ) բերդ,

Մառախուղն պատեր էր՝ կնշմարուէր մին գմբէժ :

Որոյ յարկն պարփակէր անշուք անզարթ մի սենեակ,

Փոքր մի պատուհանով փոշւով ծածկած իւր յատակ :

Թռանձր սառերով սև պատերն սարդի ոստայն էր պատեր,

Ուր վեթխարի ժանդոտած շղթայ երկաթ երև էր:

Մահատիպ լուսթեան մէջ յոգւոց ձայներ էր լուսում,

Յաղթահասակ մի պարթե նստած բանտիդ այդ քունջում.

Աշողշողար լուսերէն սաղաւարտի ակունքըն,

Ասկիթել պերճ թիկնոցն պճնէր նորա յաղթ կուրծքըն:

Պողովատիկ թենոցներ ուժեղ բազուկ պատած էր,

Եւ ոսկեկուռ կամարն հուժկու մէջքըն գրկած էր:

Օարմանալի՛ երեսոյթ . ահ ու սարսափ տեսնողաց,

Դաւ ծալ իւր հաստ պարանոց մեծ շղթայով էր կապած:

Հնչէր նա առիւծոյ ձայն, կորոտար այն օդի մէջ,

Կանդրադառնայր արձագանք առնէր յորմերն ելեէջ:

Հուր կցայտէր աչքերէն իրը հնոց բորբոքէր,

Կուտակ կուտակ արտասուք ցոլար յերկիր անկանէր:

Արտէն յոգւոց հանելով ու ուր մնացիր Հայաստան,

Երկրորդ Երշակն ասէր՝ կհեծեծէ յայս զնտան:

Իմ նախարարք մաանեցին, չկայ մին ինձ օդնական:

Զկարծեմ միայն կոտորել այս գայռազիչ անպիտան:

Աս Պարսից այն բերդըն է որ երդուած են Որմզդին,

Որ ո՞վ նորա անուն տայ՝ մեռնի անշուշտ եղկելին:

Չունիմ երբէք ումեքէ յոյս, ինձ մնայ միայնակ

Սստուած յերկնից զօրավիդ, ում դէմ արի շատ յանցանք:

Եշխարհս այսպէս է եղած, երբ ունենամք ժամ արձակ,

Սմեն չարիք կգործեմք, չեմք յիշեր կայ փոխանակ:

Սստուած այստեղ ի՞նչ անէ, վրէժ խնդիր է նա միշտ,

Կա տեղեակ է գործերիս, այս է հատուցումն Ճիշտ:

Քանի՛ անմեղ արիւններ հեղի ի զուր ի գետին,

Իմ իշխանացըն տուններ իմ ձեռքս աւեր դարձուցին:

Ո՞վ Հայաստան, Հայաստան, քեզ ես ինչե՞ր արեցի,

Իմ ներքին զաղանի կրից քո ապագայն զոհեցի:

(\*) Անամուշան, նշանակէ Պարսկիրէն՝ լոինք, անիշխատակելիք. երեխ մեր նախնիք այս բարըն թարգմանաբար են գործածած «Անյուշ», ասելով, այս ինքն նորա մասին պէտք չէ յիշել և ոչ ինչ, այլ լուսթիւն պահել:

Ը էն բազմամարդ Հայաստանն իմ՝ վայրենի վարմունքէն;

Եւերակ գերի գարձաւ, շահ ըստ տեսաւ իմ փառքէն:

Եյս դառն ուե իմ բանարն մնայ աղջիս յիշատակ,

Թռող տանջութիւն յաւխեան լինիւ այլոց օրինակ:

Իմ պատմութիւն թող կարդան, հեռանան չարիքներէն,

Խմանան՝ տանջվեցայ իմ վատ գործոց փոխարէն:

Դիւցազուն Հայ քաջերը թողին բարի անուններ,

Արդեօք ես ի՞նչ թողին ինձ արժանի՛ նախատինքներ:

Ո՞վ բարի դու կը թութիւն, քեզմէ քիչ ունենայի,

Զէի արդ հպարտ գոռող, ինչու բանտումն տանջվէի:

Դու նախանձ՝ հպարտութիւն Հայաստանը քանդեցիր,

Մեր Հայոց մեծ փառքերէն դու մեղ ժառանդ մնացիր:

Ո՞վ դու իմ Արշակաւան՝ եղար պատճառ շատ արեան.

Վեզ այլքան չպատուէի՝ չէի լիներ յայս զնաւան:

Ալձշտէ աստ առակլ՝ գովիլի է վերջին խելք,

Սուրբ Կերսէսին լսէի՝ կենացս չէր այժմ այս ելք:

Կստած խորունկ մտածէր, անցանէին տարիք շատ,

Երբ յանկարծ դուռն բացուելով երևեցաւ Գրապտամատ

Կերպինապես ամրասէր յոաին կանգնած իրը արձան,

Արքայն գերի յերազի թուէր, թուէր տեսնել զիւր ծառան:

Փարելով ոտքն համբուրեց, « Տէր իմ, ասաց, ուրախ լեր.

« Ե ատ ժամանակ իմ աչքեր քո ահսութեան կարօա էր,, :

— « Հաւատարիմ իմ ծառան, ի՞նչպէս դու աեզս եկիր.

« Արդեօք դու էլ ինձի պէս շատ յանցանքներ գործեցիր,, :

— « Եսիմ քեզ՝ Տէր՝ իմ անցքն. Ե ապուհ տայր ընդ Քուշանաց

Գոստ պատերազմ, որ վանդ մեծ կսպանար հեզ Պարսից:

Ես իմ Հայ քաջութեամբս փրկեցի կեանք Ե ապօւհին,

Եւ ի արիտուր իմ բարեաց նա երդուեց իւր գէնին,

Պարզելով ինձ ի՞նչ որ ես առաջարկեմ ըստ կամաց.

Աստաշեցայ ես յայնժամ խնդրել ըզանս քո զիմաց:

Իսա, երկար մտածելով՝ ուղելիր տսաց գանձեր,

Վո փառաց համար տայի և շատ աղնիւ պարզեներ:

Դժուարինս խնդրեցեր, չէր օրէնք ի մեղ արեաց,

Ենցուշն քեզ արդ յիշել, դու զիս արիր պարտազանց:

Բայց խոստացոյ քեզ տալոյ զոր ի՞նչ խնդրես ինձանէ,,

Տամ քեզ ապա հրաման, զնա փափազգ կատարե,, ,

Աւստի կազանքն արձակեց, լուաց մաքրեց մարմինն,

Ենուշահոտ իւղերով օծեց նորա գլուխն։  
 Կհազգներ նա սիրով նորան ազնիւ պատմուձան։  
 Չեր զիտէր՝ որ Արշակին լինելոց էր սա պատան։  
 Մատոյց նորա առաջն գեղապատշաճ մի սեղան։  
 Համադամ կերակութներ հետն դիմի պատուական։  
 Դիմին երբ նա քիչ ըմազեց՝ այլ բնութիւն փոխուեցաւ,  
 Հայաստանն յիշելով կատազի առիւծ դարձաւ։  
 Եյլ երբ բերին միրգ ազնիւ և մի դանակ ընդ նմին,  
 Ի հառաջանքս տիսուր առնելով զայն ի ձեռին,  
 “Յանկայի՛, ասաց տեսնել երջանիկ մի այսպէս օր,  
 Բաւական է Տէր, իմ Տէր, ընկալ զոդիս մեղաւոր,,,:  
 Միեց դանակն իւր սիրտ, արձակեց իսկոյն հոգին,  
 Դրաստամատ սարսափած, արիւն թաւալ դիտէն,  
 Սրտասուաց հեղեղներով վազեց զբկել իւր տէրն,  
 Հեծեծելով գառնազին ասում էր այս խօսքերն։  
 —“Եշխարհիս վայելութիւն ես Շապուհէն չուզեցի,  
 Բարելարիս տեսութեանն բոլորովին զոհեցի։  
 Մի օր արձակման տենչով դարձայ պատճառ սպանման,  
 Եշխարհումս այսուհետեւ լաւ է չլինիմ ես կենդանւ  
 Թռող մեր հայրենիք լսեն սպան իւրեանց կորսախն,  
 Մենք էլ կարօտ մնացիմք Հայաստանի սուրբ հոգին։  
 Ենյայտ լինի մեր մարմին, չարժանացան արձանի,  
 Մեղ արդեօք ով կժադէ, մեր դամբարան ուր լինի։  
 Կուլ կտայ Պարսից հողն մարմին մեր վտարանդի,  
 Եյրի մնայ մեր տապանն, Հայ ջերմ հողն չտեսնի։,,  
 Միեց դանակն և իւր սիրտ, փաթըթուեց իւր արքային,  
 “Եյս է սրտիս փափազն, ասաց, լինիմք միասին,,,:  
 Յորդ արիւններ հոսէին, լցուեց աղօտ այն սենեակ,  
 Հայ հեղ արեանց լծոյ մէջ լողային երկու դիտէ։  
 Զեր խառնուած իրար հետ սորանց արեանց գոյներն։  
 Եյն տեղ որոշ կկանգնէր Դրաստամատի արիւնն։  
  
 Եյս աշխարհիս անցքերն մնայ մեղ միշտ յիշատակ,  
 Հետաքրքիր թէ լինիմք՝ ամենն են մեղ օրինակ։  
 Երեկի այս անձինք հասին յիւրեանց նպատակ,  
 Մինն արեց վատութիւն՝ այսպէս անցոյց ժամանակ։  
 Մինն սիրէր իւր տէրն, անկարելի էր տեսնէր,

Աստուած վճռեցի վերուստ խառնիլ միմեանց արիւններ:

Երդեօք մարդիկ մատածե՞ն, առնե՞ն իւրեանց օրինակ:

Մեր Կախահարց խրանեց լինի՞նոցա ընդունակ:

Չարն չարաւ կործանի, իսկ գործ բարին չկորի:

Մարդոյս ամեն արածն միշտ իւրեանց վարձ կլինի:

Շփոթեցին այս տողեր լքումն տուին իմ արեանց

Յառաջ չերթար զրիչս, կդոչէ

Մ. ԹՃԿԵԱՆՑ.

Ի թէհրան:

## ԱԶԳԱՅԻՆ

Ի ԲԱԳՈՒ ՔԱՂԱՔ Է.

Մշակի Դրդ թուոյն մէջ պատահեցի  
նա և այս յօդուածին, « ամբողջ թժիք-  
լիսի Հայ հասարակութեան և երեխ կով-  
կասեան և այլ գաւառական Հայարնակ  
քաղաքների խօսակցութեան առարկայ  
էր վերջին օրերը Երանակ ամսագրի Դեկ-  
տեմբերի տետրակում տպուած կոնդա-  
կը,,,: Յօդուածագիրը որոշ ոչինչ չէ  
խօսում այն մասին, թէ արդեօք ի՞նչ  
պատճառաւ է այդ կոնդակը Հա-  
մար խօսակցութեան առարկայ դարձել:  
Եթէ նա խօսակցութեան առարկայ է  
դարձել այս խօսքերիս համար՝ « անտա-  
րակուսելի իմն Ճշմարտութիւն և բազ-  
մատեսակ օրինակօք հաւասարակ վկա-  
յութիւն է այն, զի ի թուլանալ որ և է  
ազգի ի հաւատոյսն՝ անխուսափելի եղա-  
նակաւ զհետ զայ նաև մայրենի լեզուի  
խանգարումն,,,: Սորա Ճշմարտութեան  
մասին ոչ միայն հին և նոր պատմու-  
թիւնները, այլ և տեղիս ամբողջ Հայ  
հասարակութիւնը և երեխ կովկասեան

և այլ գաւառական Հայարնակ քաղաք-  
ները վկայում են, որ ազգութեան և  
լեզուի հիմն՝ կրօնն է. վասն զի մարդոյս  
հոգին՝ միտքը պահանջում է ունենալ  
մի հաւատ, մի կրօն և մի Աստուածապաշ-  
տութիւն. և իւր ընտրած և համոզուած  
կրօնի համար՝ նա պատրաստ է զոհել  
ոչ միայն ամենայն բան, այլ և իւր ան-  
ձըն, որոյ օրինակները շատ և շատ են:  
Խոկ նա, որ Պ. յօդուածագիրը ասում է  
« ի՞նչ կապ կայ հաւատի և լեզուի մէջ,  
մենք չենք պաշտպանի այն մարդկանց,  
որք Եւրոպայում այժմ բաւական բազ-  
մացելեն՝ որք և հպարտութեամբ ասում  
են, թէ ոչ ինչ հաւատ չունին են: Վյն մարդը, որ չի ընդունում ոչ մի հա-  
ւատ, այն մարդը և չի ընդունում ոչ մի  
ազգ: Կան շատ որդիք, որ ոչ միայն չեն  
ընդունում իւրեանց ծնողներին, այլ և  
ծեծում են նոցա, այդպիսեաց լեզուն էլ  
չի պատկանում իւր մայրենի լեզուին,  
վասն զի դոքա ամեն ազգի մօտ ձեւանում  
են նոյն ազգի զաւակ, Մահմետականաց  
մօտ՝ Պարսկերէն խօսելով՝ լինում են  
Մահմետական, Հայի մօտ՝ Հայ, Գաղ-  
ղիացւոց մօտ՝ Գաղղիացի ելն: Ասացի, որ  
բահատկան մարդը պիտի անշուշտ ունենայ